

Տասնմեկերորդ հաղորդում

**Ուրացությունը, բարձր տեղերը և
միասնության խսկական հողի վերականգնումը**

Գրվածքների ընթերցում. Գ Թօ 12:25-33, 13:33-34, Երկ Օր 12:2-18

I. Հերորդամի ուրացությունը կարելի է դիտարկել որպես այսօրվա քրիստոնեության նախատիպ՝ Գ Թօ 12:25-33, 13:33-34.

Ա. Ուրացություն նշանակում է քողմել Աստծու ճանապարհը և այլ ճանապարհով զնալ, Աստծուց տարբեր բաների հետևել, և Հիսուս Քրիստոսի անվան ներքո և Աստծուն երկրպագելու ծածկոցի տակ «Ես»-ի համար ինչ-որ բաներ անել՝ Գրծ 9:2, 18:26, Բ Պտ 2:2, 15, 21, Հդ 11.

Բ. Հերորդամի ուրացությունը բաղկացած էր հինգ բանից.

1. Հերորդամը երկու ոսկե հորը սարքեց (կուռքեր)՝ դնելով մեկը Բերելում, իսկ մյուսը՝ Դանում, որպեսզի ժողովրդին շենի Երուսաղեմում երկրպագելուց՝ այդպիսով խախտելով Սուրբ Երկրում մեկ եզակի երկրպագության կենտրոն ունենալու մասին Աստծու հրամանագիրը՝ Խրայելի զավակների միասնությունը պահելու համար:
2. Հերորդամը բարձր տեղերում տաճար կառուցեց և հասարակ ժողովրդի միջից քահանաներ նշանակեց, որոնք Ղափի ցեղից չէին՝ Գ Թօ 12:31, 13:33թ, Բ Մեց 13:9:
3. Հերորդամը ութերորդ ամսի տասնինգերորդ օրը տոն սահմանեց (այն ամսի, որն իր սրտում էր հնարել), այն տոնի նման, որը Հուդայում էր՝ Գ Թօ 12:32ա, 33թ:
4. Հերորդամը Բերելի զոհասեղանի վրա իր սարքած հորբերին զոհեր մատուցեց և Բերելում դրեց բարձր տեղերի քահանաներին՝ խի. 32թ-33ա:
5. Հերորդամը բարձրացավ զոհասեղանի մոտ, թեև քահանա չէր՝ խ. 33թ:
- Գ. Հերորդամի ուրացությունը լուրջ մեղք դարձավ, որի պատճառով նրա ամբողջ ընտանիքն Աստծու դատաստանի ներքո ոչնչացվեց, և որն ի վերջո հանգեցրեց Խրայելի գերեվարվելուն՝ 13:34, 14:7-11, 15-16, 15:29-30, Դ Թօ 17:20:
- Դ. Այսօրվա «հերորդամների» ստեղծած երկրպագության կենտրոնները իրականում փառասիրության կենտրոններ են.
 1. Քրիստոնեության մեջ բաժանությունները պայմանավորված են եսասիրությամբ և փառասիրությամբ:
 2. Քանի որ ոմանք փառասեր են և ուզում են մի կայսրություն ունենալ, որը բավարարում է իրենց եսասիրական ցանկությունը, նրանք անտեսում են Աստծու ընտրությունը:
- Ե. Աստծու նորկտակարանյան տնտեսության մեջ Քրիստոսի բոլոր ճշմարիտ հավատացյալները դառնում են Աստծու քահանաներ, սակայն դեգրադացված քրիստոնեությունը մի համակարգ է ստեղծել, որը միայն

ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՈՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

որոշ հավատացյալների է սահմանում ծառայելու Աստծուն՝ նրանց դարձնելով կղերական աստիճանակարգություն և հավատացյալների մյուս մասին բողնելով որպես աշխարհականների. սա ուրացողական կիրարկություն է, որից մենք պետք է զարշենք ու հրաժարվենք՝ Ա Պտ 2:9, Հյտ 1:6, 5:10, 2:6, 15:

Զ. Քանի որ այսօրվա քրիստոնեությունը լցված է ուրացությամբ, Տերը վերականգնման կարիք ունի՝ կյանքի և ճշմարտության վերականգնման՝ Երմ 2:11, 13, 19, Հյտ 2:6, 15, Ա Հվի 1:1-2, 5-6, Հվի 18:37թ, 10:10թ:

Ե. Կյանքի ապահովումը և ճշմարտության հայտնությունն այն հակաքույներն են, որոնք առաքյալներն օգտագործում էին ուրացության և եկեղեցու անկման դեմ պայքարելիս՝ Ա Հվի 1:1-2, 5-6, Հվի 18:37թ, 10:10թ, Բ Պտ 1:3- 21, Բ Տմբ 1:1, 10, 2:15, 25:

II. ԽՍԼԿԱԿԱՆ, ԽԱՄԱԲՈՎՎԱՅԻԴԱԿ ՄԻԽԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆՈԳՆԵԼՈՒ և ՊԱԿԱՎԱՅԻԼՈՒ ԽԱՄԱՐ ՄԵՆՔ պետք է ոչնչացնենք բարձր տեղերը՝ Գ Թգ 11:7-8, 12:26-33, 13:33-34, 14:22-23, 15:14, 22:43, Գ Թգ 12:2-3, 14:3-4, 15:3-4, 34-35.

Ա. Բարձր տեղերն այն տեղերն էին, որտեղ հեթանոս մարդիկ իրենց կուտքերին էին երկրպագում:

Բ. Երբ Խսրայելի զավակները մտան Քանանի երկիրը ու տիրեցին դրան, Աստված նրանց պատվիրեց ոչնչացնել բոլոր բարձր տեղերը՝ Երկ Օր 12:1-3.

1. Բարձր տեղ հաստատել նշանակում է բաժանություն ունենալ, հետևաբար բարձր տեղերի նշանակությունը բաժանությունն է:

2. Իր ժողովրդի միասնությունը պահպանելու համար Աստված պահանջեց, որ նրանք զան Իր ընտրության եզակի տեղը. բարձր տեղերն այս եզակի տեղի համար փոխարինում և այլընտրանք էին՝ 8, 11, 13-14, 18:

3. Առաջին Թագավորաց գրքում երկու քազավոր՝ Սողոմոնը և Հերորդակամը, բարձր տեղերը հաստատելու նախաձեռնություն ցուցաբերեցին, առաջինը՝ իր տենչանքին տրվելու պատճառով, իսկ վերջինը՝ իր փառասիրությանը՝ 11:7-8, 12:27:

Գ. Բարձր տեղը բարձրություն է, ընդհանուր մակարդակից վեր բարձրացված ինչ-որ բան.

1. Սա ցույց է տալիս, որ բարձր տեղը ենթադրում է ինչ-որ բանի բարձրացում:

2. Ակզրունքորեն քրիստոնեության յուրաքանչյուր բարձր տեղ, յուրաքանչյուր բաժանություն ներառում է Քրիստոսից բացի որևէ այլ բանի բարձրացում, մեծարում՝ հմտ Կդս 1:18:

Դ. Սողոմոնի և Հերորդակամի օրերին բարձր տեղերի կառուցման գրառումը հոգևոր նշանակություն ունի. այն գրվել է մեզ հոգևոր ցուցում տալու համար՝ Հոմ 15:4-6.

1. Սողոմոնի և Հերորդակամի կառուցած բարձր տեղերը լրջորեն վնասեցին միասնության հողը՝ Գ Թգ 11:7-8, 12:26-33:

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

2. Եկեղեցական կյանքում մենք չպետք է բարձր տեղեր ունենանք. փոխարենք պետք է մի մակարդակի վրա լինենք, որպեսզի Քրիստոսին մեծարենք՝ Կղս 1:18, 3:10-11:
 3. Ամեն մի բարձր տեղ, նույնիսկ այն, որտեղ իրական զոհաբերություններ են մատուցվում, վճառ է հասցնում միասնության հողին:
 - Ե. Բարձր տեղերի ոչնչացումը երեք հիմնական բան է ներառում՝ տեղերը, պատկերները և անունները՝ Երկ Օր 12:2-3.
 1. Հոգևորապես ասած՝ մենք պետք է եկեղեցուց բացի ամեն տեղ և Քրիստոսի անունից բացի ամեն անուն ոչնչացնենք. սա նշանակում է, որ մենք պետք է ոչնչացնենք մեր մշակույթը, նախահակումը, խառնվածքը, սովորությունները, բնական առանձնահատկությունները, նախասահրությունները, կրոնական անցյալն իր ազդեցությանը՝ այն ամենը, ինչը վճառում է իսկական միասնությանը՝ Գղտ 2:20, 5:24, 6:14:
 2. Կղս 3:11-ում գրված խոսքն իրագործելու համար ամեն մի այլ տեղ պետք է ամրողովվին ոչնչացվի.
 - ա. Մենք պետք է ոչնչացնենք այն ամենը, ինչը Քրիստոսով հանդերձ եկեղեցին չէ:
 - բ. Մենք պետք է պարզապես եկեղեցական կյանքում լինենք՝ վայելով Քրիստոսին՝ որպես բարի երկրի հարստության՝ Երկ Օր 8:7-9, Եփս 3:8:
 3. Եկեղեցական կյանքը բոլացել է բարձր տեղերը ոչնչացնելու պատրաստակամության պակասի պատճառով՝ Գ Թզ 15:14, 22:43.
 - ա. Մեր մարդկային կյանքում և մշակույթում շատ տեղեր են մնում, որոնք պետք է ոչնչացվեն. մենք պետք է դրանք բոլորը ոչնչացնենք և հետո զնանք Աստծու լնարդության եզակի վայրը՝ եկեղեցին՝ Գղտ 5:24, Մտք 16:18:
 - բ. Ամեն տեղում, որը պետք է ոչնչացվի, կա նվիրաբերված այուն, խորհրդանիշ կամ պատկեր. մեր բնավորության կամ նախահակման մեջ կարող են այսպիսի սյուներ, խորհրդանիշներ կամ պատկերներ լինել, որոնք պետք է ոչնչացվեն:
 - գ. Եկեղեցում Քրիստոսից բացի ուրիշ ոչ մի բան չի կարող լինել. Քրիստոսը պետք է լինի ամեն բան ամեն բանում՝ Կղս 1:18, 27, 2:2, 3:11:
- III. Ուրացության, բարձր տեղերի և ողջ քրիստոնեական աշխարհի բաժանությունների պատճառով կա միասնության իսկական հողի վերականգնման կարիքը՝ Եփս 4:2-6, 13, Հփս 17:11, 14-23, Ա Կրթ 10:16-17.**
- Ա. Նոր Կտակարանի աստվածային հայտնության համաձայն՝ եկեղեցու հողը, միասնության իսկական հողը, բաղկացած է երեք առանցքային տարրերից.
 1. Եկեղեցու հողի կազմության առաջին տարրը Քրիստոսի տիեզերական Մարմնի եզակի միասնությունն է՝ Եփս 4:4.

ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՅՈՒԹ ԹԱԳԱՎՈՐԱՑ ԳՐՔԵՐ

- ա. Այս միասնությունը կոչվում է «Հոգու միասնություն»՝ խ. 3:
- բ. Այս միասնությունն այն միասնությունն է, որի համար Տերը Հվի 17-րդ գլխում աղոթեց. պատրաստված Եռամեկ Աստծու միաձուլման միասնություն Քրիստոսին բոլոր հավատացողների հետ՝ խմ. 6, 11, 14-24:
- գ. Այս միասնությունը ներդրվեց Քրիստոսի բոլոր հավատացյալների հոգու մեջ, երբ նրանք կյանքի Հոգով Քրիստոսի՝ որպես աստվածային կյանքի հետ վերածնվեցին:
2. Եկեղեցու հողի երկրորդ տարրը տեղանքի եզակի հողն է, որտեղ տեղական եկեղեցի է հաստատվում և գոյություն ունենում՝ Գրծ 14:23, Տու 1:5, Հյու 1:11:
3. Եկեղեցու հողի երրորդ տարրը միասնության Հոգու իրականությունն է, որը տեղական եկեղեցու եզակի հողի վրա արտահայտում է Քրիստոսի Մարմնի եզակի միասնությունը՝ Ա Հվի 5:6, Հվի 16:13.
- ա. Իրականության Հոգով, ով Աստվածային Երրորդության կենդանի իրականությունն է, Քրիստոսի Մարմնի միասնությունը դառնում է իրական և կենդանի:
- բ. Եկեղեցու հողն այս Հոգու շնորհիվ կիրառվում է կյանքում, այլ ոչ թե որպես հրամանագիր:
- գ. Այս Հոգով եկեղեցու իսկական հողը կապվում է Եռամեկ Աստծու հետ՝ Եփս 4:3-6:
- թ. Եկեղեցին՝ Քրիստոսի օրգանական Մարմինը, անբաժան է և անտարանջատելի. այս եզակի Մարմինն արտահայտվում է բազմաթիվ տեղական եկեղեցիներում աստվածային միասնության մեջ, ինչպես որ դա Եռամեկ Աստծու պարագայում է, և աստվածային բնության, տարրի, էության, արտահայտության, գործառույթի և վկայության մեջ՝ Հյու 1:11, Հվի 17:11, 21, 23:
- գ. Իսկական միասնությունը, միասնությունը, որն ըստ Աստծու բնության է, համարովանդակ, համապարփակ միասնություն է, որը ներառում է բոլոր դրական բաները՝ Սոմ 23:6, 36:8-9, 43:3-4, 84:1-8, 10-12, 92:10, 133:1, 3թ.
1. Երբ միասնությունը վերականգնվում է, դրանով վերականգնվում են բոլոր հոգևոր հարստությունները և բոլոր դրական բաները, որովհետև դրանք գոյություն են ունենում միասնության մեջ՝ Եփս 4:3, 3:8:
2. Բոլոր բարեպաշտ բաները և ողջ հոգևոր հարստությունը մերն են միասնության իսկական հիմքի վրա՝ Երկ Օր 8:7-9, 12:12, 26-28:
3. Իսկական միասնությունը մասնակի միասնություն չէ. դա մեծ, լիավարտ, համապարփակ միասնություն է՝ միասնություն իր ամբողջության մեջ՝ Սոմ 133:1.
- ա. Այս միասնությունը, ինչպես բացահայտված է Եփս 4:3-6-ում, ներառում է Հայր Աստծուն, Քրիստոս Տիրոջը և Հոգուն՝ որպես կյանք Տվողի:

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

- թ. Համարովանդակ միասնությունը մեզ մուտք է տալիս դեպի բոլոր դրական առաքինություններն ու հատկանիշները՝ խխ. 1-2:
- Դ. Մենք գոհարանում և փառարանում ենք Տիրոջը բարձր տեղերի ոչնչացմանը և իսկական, համարովանդակ միասնության վերականգնմանն ու պահպանմանը վերաբերող տեսիլի համար. Տիրոջ վերականգնման մեջ այսօր այս միասնությունն իմանալը, փորձառարար ապրելն ու վայելելը մեր արտոնությունն է՝ Սղմ 133:1, Յթ, Հվի 17:21-23, Եփս 4:3-6: